## Միջոցառումներ
## Հայաստանի Հանրապետության առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի վերահսկողության ոլորտներում խնդիրների և ռիսկերի նվազեցմանն ու վերացմանն ուղղված

| Հ/Հ | Միջոցառում | Ակնկալվող արդյունք | Կատարող (համակատարող) ստորաբաժանում | Ժամկետ | |
|---|---|---|---|---|---|
| 1 | «Առողջապահության և աշխատանքի պետական վերահսկողության մասին» օրենքի նախնական նախագծային տարբերակի ներկայացում Գրասենյակ | Տեսչական մարմնի կողմից իրականացվող վերահսկողական լիազորությունների հստակեցում և առանձնահատկությունների սահմանում օրենքով, նոր գործիքակազմերի ներդնում | ԻԱՓՎ | 01.08.2024թ. | Նախագիծը սահմանված ժամկետում ներկայացվել է Գրասենյակ: |
| 2 | ՀՀ կառավարության 2020 թվականի ապրիլի 30-ի N 718-Ն որոշմամբ հաստատված «Դեղերի, դեղանյութերի, հետազոտվող դեղագործական արտադրանքի արտադրության, դեղերի շրջանառության և դեղագործական գործունեության | Տեսչական մարմնի կողմից իրականացվող ստուգումների ընթացքում ի հայտ եկած խնդրի շտկման և վերահսկողության լիարժեք իրականացում: Դեղերի, դեղանյութերի, հետազոտվող դեղագործական արտադրանքի արտադրության համար «Պատշաճ արտադրական գործունեության» հավաստագրի առկայության պահանջի ստուգում | ԴՇՎՎ<br>ԻԱՓՎ<br>ՏԿ | 12.04.2024թ. | Նախապատրաստվել է կառավարության որոշման նախագիծ ՀՀ կառավարության 2020 թվականի ապրիլի 30-ի թիվ 718-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին, որը ներկայացվել է Գրասենյակ, նախագիծը ուժի |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | բնագավառի վերահսկողության» (ՏԳՏԴ ծածկագիր C21)՝ N 2.2 ստուգաթերթի 3-րդ կետում փոփոխություն կատարելու մասին ՀՀ կառավարության որոշման նախագծի ներկայացում Գրասենյակ | | | | մեջ է մտել 2024 թվականի հունիսի 28-ին: |
| 3 | «ՀՀ կառավարության 2002 թվականի հունիսի 29-ի N 867 որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի ներկայացում Գրասենյակ | ՀՀ կառավարության 2002 թվականի հունիսի 29-ի N 867 որոշման 3-րդ հավելվածի 43.1-րդ կետում ՇՄՁ հավաստագրի ներկայացման վերաբերյալ պահանջի սահմանում | ԴՇՎՎ ԻԱՓՎ ՏԿ | 23.03.2024թ. | Նախապատասվել է կառավարության որոշման նախագիծ ՀՀ կառավարության 2020 թվականի ապրիլի 30-ի թիվ 718-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին, որը սահմանված ժամկետներում ներկայացվել է Գրասենյակ, նախագիծը ուժի մեջ է մտել 2024 թվականի հունիսի 28-ին: |
| 4 | ««Նյութական պահուստի մասին» ՀՀ օրենքում լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի առաջարկի ներկայացում Գրասենյակ | Ռազմավարական պաշարների պահուստ հանդիսացող դեղերի և բժշկական նշանակության գույքի ներմուծում իրականացող պետական ոչ առևտրային կազմակերպությունների համար բացառության նախատեսում, որը հնարավորություն կտա վերջիններիս չընդգրկել ռազմավարական պաշարների պահուստ պահելու պարտավորություն ունեցող կազմակերպությունների ցանկում | ԴՇՎՎ ԻԱՓՎ ՏԿ | 29.03.2024թ. | Նախապատասվել է կառավարության որոշման նախագիծ ՀՀ կառավարության 2020 թվականի ապրիլի 30-ի թիվ 718-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին, որը սահմանված ժամկետներում ներկայացվել է Գրասենյակ: |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 5 | «ՀՀ կառավարության 2019 թվականի փետրվարի 28-ի թիվ 164 որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի ներկայացում Գրասենյակ | Կյանքի և առողջության համար վտանգ ներկայացնող դեղերի հետկանչի արդյունավետ և ժամանակին իրականացում | ԴԾՎՎ<br>ԻԱՓՎ<br>ՏԿ | | «ՀՀ կառավարության 2019 թվականի փետրվարի 28-ի թիվ 164-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծին ի պատասխան ներկայացվել է համապատասխան առաջարկ ՀՀ առողջապահության նախարարություն: |
| 6 | Բժշկական օգնության և սպասարկման ոլորտների վերահսկողության գործող ստուգաթերթերի լրամշակում և նախագծերի ներկայացում Գրասենյակ | գործող ստուգաթերթերի համապատասխանեցում լրամշակված իրավական ակտերի պահանջներին | ԲՕՍՎՎ | | Լրամշակվել են 16 ստուգաթերթեր, նոր խմբագրմամբ ՀՀ կառավարության N 1650-Ն որոշմամբ հաստատվել են 16 ստուգաթերթեր |
| 7 | «Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» ՀՀ օրենքում և «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքում՝ լրացումներ կատարելու մասին նախագծերի առաջարկի ներկայացում Գրասենյակ: | Ավագ և միջին բուժաշխատողներին պարտադիր վարման ենթակա բժշկական փաստաթղթերի տրամադրման համար պատասխանատուի նշանակում, իսկ չտրամադրելու դեպքում՝ պատասխանատվության միջոցի սահմանում | ԲՕՍՎՎ<br>ԻԱՓՎ | | Լիազոր մարմնի հետ կազմակերպված հանդիպմանը քննարկվել է նշված հարցը, օրենսդրական փոփոխությունը կկատարվի հաջորդ տարում |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 8 | Լիազոր մարմնի հետ քննարկումների կազմակերպում՝ բժշկական օգնության և սպասարկման վերահսկողության ոլորտի ստուգումների ու վարչական վարույթների ժամանակ ի հայտ եկած խնդիրների շուրջ և իրավական ակտերում փոփոխություններ կատարելու, նոր իրավական ակտեր ստեղծելու վերաբերյալ առաջարկությունների ներկայացում (ՀՀ կառավարության 29.06.2002թ. N 867 որոշում և այլն) | Վերահսկողության արդյունավետության բարձրացում | ԲՕՍՎՎ | | Բժշկական օգնության և սպասարկման վերահսկողության ոլորտի ստուգումների ու վարչական վարույթների ժամանակ ի հայտ եկած խնդիրների շուրջ և իրավական ակտերում փոփոխություններ կատարելու, նոր իրավական ակտեր ստեղծելու վերաբերյալ տեղի են ունեցել քննարկումներ լիազոր մարմնի հետ և ներկայացվել են առաջարկություններ |
| 9 | Բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովման բնագավառի ստուգաթերթերում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին առաջարկի ներկայացում Գրասենյակ<br>1. Ստուգաթերթ N 1.2<br>2. Ստուգաթերթ N 1.3<br>3. Ստուգաթերթ N 1.5<br>4. Ստուգաթերթ N 1.8<br>5. Ստուգաթերթ N 1.12<br>6. Ստուգաթերթ N 1.15 | ՀՀ-ում ռիսկի վրա հիմնված ստուգումների ընթացքում լիարժեք վերահսկողության իրականացում | ՀՍՀՎՎ | 1-4-րդ եռամսյակ | 1. Մշակվել և հաստատվել է «Նախադպրոցական կրթական հաստատություններում սանիտարահիգիենիկ և հակահամաճարակային բնագավառի վերահսկողություն» ստուգաթերթ N 1.2-ը:<br>2. Մշակվել է «Ստոմատոլոգիական բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | 7. Ստուգաթերթ N 1.17 | | | | կազմակերպությունների սանիտարահիգիենիկ և հակահամաճարակային վերահսկողություն» ստուգաթերթ N 1.3-ը:<br>3. ՀՀ առողջապահության նախարարության կողմից Տեսչական մարմին կարծիքի է ուղարկվել ՀՀ առողջապահության նախարարի 2006 թվականի մայիսի 17-ի ««Լողավազանների կառուցվածքին, շահագործմանը և ջրի որակին ներկայացվող հիգիենիկ պահանջներ» N 2-III-2.2.7 սանիտարահամաճարակային կանոններ և նորմերը հաստատելու մասին» N534-Ն հրամանում լրացումներ և փոփոխություններ կատարելու վերաբերյալ Առողջապահության նախարարի հրամանի նախագիծը, սակայն մինչ օրս նորմը չի հաստատվել, որի պատճառով «Բաղնիքների գործունեության, սպորտային |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | | | օբյեկտների գործունեության սանիտարահիգիենիկ և հակահամաճարակային բնագավառի վերահսկողություն» ստուգաթերթ N 1.5-ը փոփոխության չի ենթարկվել: 4. «Վնասակար թափոնների մշակման և ոչնչացման, թափոնների վնասազերծման և այլ մշակման սանիտարահիգիենիկ և հակահամաճարակային վերահսկողության» ստուգաթերթ N 1.8-ում, «Վնասակար բժշկական թափոնների մշակման և ոչնչացման սանիտարահիգիենիկ և հակահամաճարակային վերահսկողության» ստուգաթերթ N 1.12-ում և «Մանրէազերծման գործունեության սանիտարահիգիենիկ և հակահամաճարակային վերահսկողության» ստուգաթերթ N 1.17-ում փոփոխություններ կատարելու |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | | | վերաբերյալ առաջարկություն է ուղարկվել Գրասենյակ: 5.Քանի որ վարակիչ հիվանդությունների համաճարակաբանական հսկողության պահանջների սանիտարահիգիենիկ և հակահամաճարակային վերահսկողության N1.15 ստուգաթերթում ներառված են 15 սանիտարական նորմեր և կանոններ, որից փոփոխության է ենթարկվել 6-ը, և դեռևս շարունակվում են նորմերի փոփոխությունները, ստուգաթերթը չի ենթարկվում փոփոխության, մինչև ստուգաթերթում ներառված բոլոր նորմերի լրամշակումը: |
| 10 | Խմելու ջրամատակարարման համակարգերի շահագործման խնդրի կարգավորման վերաբերյալ առաջարկությունների ներկայացում շահագրգիռ մարմիններին | Խմելու ջրամատակարարման բոլոր համակարգերի շահագործման ապահովում, ջրային գործոնով պայմանավորված վարակիչ հիվանդությունների կանխարգելում | ՀՍՀՎՎ | 1-ին եռամսյակ | 1.Գրություն գրասենյակ: 2.Փոխվարչապետի գրասենյակում Տեսչական մարմնի ղեկավարի տեղակալի հետ միասին մասնակցել ենք խմելու ջրի որակի բարելավման ուղղությամբ ԵՄ դիրեկտիվի |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | | | ներդրման հետագա քայլերի և առնչվող հարցերի քննարկմանը: 3.Գրություն է ուղարկվել ՀՀ առողջապահության նախարարին: 4. Գրություններ են ուղարկվել բոլոր մարզպետներին: |
| 11 | «Բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող կազմակերպություններում ձեռքերի հիգիենային ներկայացվող պահանջների վերահսկողություն» ստուգաթերթի նախագծի մշակման վերաբերյալ առաջարկության ներկայացում Գրասենյակ | ՀՀ առողջապահության նախարարի 2023 թվականի հոկտեմբերի 3-ի N 46-Ն հրամանով հաստատված «Բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող կազմակերպություններում ձեռքերի հիգիենային ներկայացվող պահանջներ» ՍԿ N 3.1.1-002-23 սանիտարական կանոնների և հիգիենիկ նորմատիվների պահանջների նկատմամբ վերահսկողության ապահովում | ՀՍՀՎՎ | 3-րդ եռամսյակ | Մշակվել և հաստատվել է «Բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող կազմակերպություններում ձեռքերի հիգիենային ներկայացվող պահանջների նկատմամբ վերահսկողություն» ստուգաթերթ N 1.25-ը: |
| 12 | ՀՀ կառավարության 2003 թվականի մարտի 27-ի N 347-Ն որոշման հիման վրա ստուգաթերթի նախագծի մշակում և ներկայացում Գրասենյակ | Վերահսկողության արդյունավետության բարձրացում | ՀՍՀՎՎ | 3-րդ եռամսյակ | Նոր մշակվող, կամ լրամշակվող բոլոր ստուգաթերթերում ներառվում են ՀՀ կառավարության 2003 թվականի մարտի 27-ի N 347-Ն որոշման համապատասխան ոլորտին առնչվող հարցերը: |
| 13 | Շինարարության ոլորտում աշխատանքային իրավունքի՝ ներառյալ աշխատողների առողջության պահպանման և | Տնտեսավարողների իրազեկվածության մակարդակի բարձրացում | ԱՕՎՎ ԻԱՓՎ | 17.09.2024թ. 20.09.2024թ. | Օրենսդրության կատարելագործման վերաբերյալ համապատասխան |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | անվտանգության ապահովման վերահսկողության համակարգային խնդիրների ուսումնասիրություն և վերլուծություն, օրենսդրության կատարելագործման վերաբերյալ համապատասխան առաջարկությունների դեպքում՝ առաջարկությունների ներկայացում Գրասենյակ | Շինարարական աշխատանքներ կատարող անձանց կյանքի և առողջության նկատմամբ վերահսկողություն և կանխարգելում Շինարարության ոլորտում տեղի ունեցող դժբախտ դեպքերի քանակի նվազեցում | | | առաջարկությունները ներկայացվել են Գրասենյակ: |

**Հայաստանի Հանրապետության առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի կանխարգելիչ և իրազեկման միջոցառումների 2024 թվականի տարեկան ծրագիր**

| Հ/Հ | Միջոցառում | Ակնկալվող արդյունք | Կատարող (համակատարող) ստորաբաժանում | Ժամկետ | Կատարողական |
|---|---|---|---|---|---|
| 1 | Բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող կազմակերպություններում դեղատոմսով բաց թողնվող դեղերի դեղատոմսերի լրացման, դուրսգրման վերաբերյալ ՀՀ օրենսդրությամբ նախատեսված միջոցառումների իրականացում | «Դեղերի մասին» ՀՀ օրենքով, ենթաօրենսդրական իրավական ակտով սահմանված դեղատոմսերի լրացման, դուրսգրման, բաց թողնման վերաբերյալ իրազեկվածության բարձրացում | ԴՇՎՎ ԻԽՀՏԱԲ | 2-րդ եռամսյակ | Բոլոր տնտեսավարող սուբյեկտներում, որտեղ իրականացվում են ստուգումներ կամ վարչական վարույթներ, իրականացվում են բժշկական ու հիգիենիկ գիտելիքների և առողջ ապրելակերպի մասին իրազեկման աշխատանքներ: |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 2 | Բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովման ոլորտի հետ առնչվող տնտեսվարող սուբյեկտների համար բժշկական ու հիգիենիկ գիտելիքների և առողջ ապրելակերպի մասին իրազեկում | Բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովում, վերահսկողության ոլորտում արձանագրվող խախտումների կանխում ու նվազեցում | ՀՍՀՎՎ ԻԽՀՏԱԲ | 01.08.2024թ. 24.09.2024թ. 26.09.2024թ. 12.11.2024թ. | Իրականացվել են իրազեկման սեմինարներ՝ հիգիենիկ և հակահամաճարակային հսկողություն՝ ջերմային ռեժիմ և սուր շնչառական վարակներ թեմայով, ներկայացվել են սանիտարահամաճարակային անվտանգության ապահովման բնագավառների գործունեությունը կարգավորող օրենքներով և ենթաօրենսդրական ակտերով սահմանված, մասնավորապես, նոր ընդունված և փոփոխված նորմերի պահանջները: |
| 3 | Գործատուների հանրապետական միության, արհեստակցական կազմակերպությունների հանրապետական միության հետ համատեղ սեմինարների կազմակերպում | Գործատուների կողմից ՀՀ աշխատանքային օրենսդրության նորմերի կիրարկման արդյունավետության բարձրացում, աշխատողների իրազեկվածության բարձրացում | ԱՕՎՎ | 21.05.2024թ. 12.07.2024թ. 17.10.2024թ. | Գործատուների հանրապետական միության, արհեստակցական կազմակերպությունների հանրապետական միության հետ համատեղ իրականացվել են իրազեկման սեմինար: |
| 4 | Մարդկանց թրաֆիքինգի աշխատանքային շահագործման, ներառյալ երեխաների թրաֆիքինգի և շահագործման, հարկադիր աշխատանքի վտանգի նվազեցման ուղղություններով սեմինար-քննարկումների անցկացում | ՀՀ-ում 2023-2025 թթ. Մարդկանց թրաֆիքինգի և շահագործման դեմ պայքարի կազմակերպման ազգային ծրագրով և ծրագրի իրականացման | ԱՕՎՎ ԻԽՀՏԱԲ | 10.10.2024թ. 27.11.2024թ. 13.12.2024թ. | 1.Համապատասխան ստորաբաժանման աշխատակիցները մասնակցել են Միգրացիայի միջազգային կազմակերպության (ՄՄԿ) Հայաստանի առաքելության «Թրաֆիքինգի դեմ պայքարի Հայաստանում, զոհերի |


ք. Երևան,Շենգավիթ, Արարատյան 26
(374-10) 65-05-53 Էլ. փոստ՝ info@hlib.am
Թեժ գիծ 8107 www.hlib.am

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | ժամանակացույցով նախատեսված միջոցառումների իրականացում | | | նույնականացման և ուղղորդման համակարգերի բարելավում» ծրագրի շրջանակներում իրականացված փործագիտական հարցազրույց-քննարկմանը:<br>2. Իրականացվել է ՀՀ օրենսդրությամբ սահմանված երաշխիքների, աշխատատեղում անվտանգ աշխատանքային պայմանների ապահովման, երեխաներին աշխատանքի վատթարագույն ձևերում ներգրավման արգելման, ինչպես նաև հարկադիր աշխատանքի վերաբերյալ սեմինար քննարկում ՀՀ ԿԳՄՍ «Երևանի Ն. Աճեմյանի անվան տարածաշրջանային թիվ 2 պետական քոլեջ» ՊՈԱԿ-ի մանկավարժական կազմի և սովորողների համար:<br>3.Իրականացվել է սեմինար-քննարկում Հայաստանում Եվրոպական քոլեջ հիմնադրամի մանկավարժական կազմի և 16-18 տարեկան սովորողների համար ՀՀ օրենսդրությամբ սահմանված երաշխիքների, աշխատատեղում անվտանգ աշխատանքային պայմանների ապահովման, երեխաներին աշխատանքի վատթարագույն ձևերում |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | | | ներգրավման արգելման, ինչպես նաև հարկադիր աշխատանքի վերաբերյալ: |
| 5 | Իրազեկման աշխատանքներ, այդ թվում՝ մինչև 18 տարեկան անձանց, երիտասարդների հետ սեմինարների, դասընթացների միջոցով | Թրաֆիքինգի, աշխատանքային շահագործման, հարկադիր աշխատանքի վերաբերյալ իրազեկվածության մակարդակի բարձրացում, այդ թվում մինչև 18 տարեկան անձանց | ԱՕՎՎ ԻԽՀՏԱԲ | 29.05.2024թ.<br>27.11.2024թ.<br>13.12.2024թ. | Իրականացվել է սեմինար-քննարկում Հայաստանի ազգային Ագրարային համալսարանի Անտոն Քոչինյանի անվան գյուղատնտեսական քոլեջի մանկավարժական կազմի և սովորողների համար ՀՀ օրենսդրությամբ սահմանված երաշխիքների, աշխատատեղում անվտանգ աշխատանքային պայմանների ապահովման, երեխաներին աշխատանքի վատթարագույն ձևերում ներգրավման արգելման, ինչպես նաև հարկադիր աշխատանքի վերաբերյալ:<br>2. Իրականացվել է ՀՀ օրենսդրությամբ սահմանված երաշխիքների, աշխատատեղում անվտանգ աշխատանքային պայմանների ապահովման, երեխաներին աշխատանքի վատթարագույն ձևերում ներգրավման արգելման, ինչպես նաև հարկադիր աշխատանքի վերաբերյալ սեմինար քննարկում ՀՀ ԿԳՄՍ «Երևանի Ն. Աճեմյանի անվան |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | | | տարածաշրջանային թիվ 2 պետական քոլեջ» ՊՈԱԿ-ի մանկավարժական կազմի և սովորողների համար:<br><br>3. Իրականացվել է սեմինար-քննարկում Հայաստանում Եվրոպական քոլեջ հիմնադրամի մանկավարժական կազմի և 16-18 տարեկան սովորողների համար ՀՀ օրենսդրությամբ սահմանված երաշխիքների, աշխատատեղում անվտանգ աշխատանքային պայմանների ապահովման, երեխաներին աշխատանքի վատթարագույն ձևերում ներգրավման արգելման, ինչպես նաև հարկադիր աշխատանքի վերաբերյալ: |
| 6 | ԱԱՏՄ-ի կողմից իրականացվող վերահսկողության, ստուգումների մեկնարկի, վերահսկողության շրջանակում կիրառվող ստուգաթերթերի և ոլորտը կարգավորող իրավական ակտերի մասին իրազեկում | Իրազեկման նյութի պատրաստման, դրանք ԱԱՏՄ-ի պաշտոնական կայքի և սոցիալական հարթակների միջոցով տարածելու արդյունքում տնտեսավարողների և հանրության շրջանում իրազեկվածության բարձրացում | ԻԽՀՏԱԲ | 23.09.2024թ.<br>22.10.2024թ.<br>28.11.2024թ. | Կատարվել են համապատասխան իրազեկման աշխատանքներ: |
| 7 | Բնակչության շրջանում ԱԱՏՄ-ի գործառույթների և կատարվող աշխատանքների մասին իրազեկում | Իրազեկման նյութի պատրաստման, ԶԼՄ-ների հետ համագործակցությամբ | ԻԽՀՏԱԲ | 01.02.2024թ.-<br>01.07.2024թ. | Իրականացվել են բնակչության շրջանում ԱԱՏՄ-ի գործառույթների և |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | հոդվածների և տեսանյութերի պատրաստման, դրանք ԱԱՏՄ պաշտոնական կայքի և սոցիալական հարթակների միջոցով տարածելու արդյունքում տնտեսավարողների և հանրության շրջանում իրազեկվածության բարձրացում | | | կատարվող աշխատանքների մասին իրազեկման աշխատանքներ: |
| 8 | Նախորդ տարվա ընթացքում կատարված աշխատանքի ամփոփ տվյալների՝ այդ թվում իրականացված վերահսկողության, ստացված դիմում բողոքների, հարցումների, ստացված զանգերի ներկայացում և տրամադրում ԶԼՄ-ներին | Հաշվետվությունների, իրազեկման նյութերի պատրաստման և հրապարակման միջոցով տեղեկությունների մատչելիության և հրապարակայնության ապահովում | ԻԽՀՏԱԲ | 12.02.2024 | Նախորդ տարվա ընթացքում կատարված աշխատանքի ամփոփ տվյալների վերաբերյալ կայքէջում տեղադրվել է համապատասխան հրապարակում: |
| 9 | ԱԱՏՄ-ի պաշտոնական կայքում և սոցիալական հարթակներում հրապարակումների միջոցով ոլորտային՝ նշանակալի և տոնական օրերի հանրային իրազեկում | Ոլորտային նշանակալի և տոնական օրերի իրազեկման միջոցով ԱԱՏՄ-ի, վերահսկողության ոլորտում գործունեություն իրականացնող տնտեսավարող սուբյեկտների և հասարակության շրջանում | ԻԽՀՏԱԲ | Ըստ օրացուցային օրերի | Իրականացվել են նշանակալի և տոնական օրերի հանրային իրազեկման աշխատանքներ: |



ք. Երևան,Շենգավիթ, Արարատյան 26
☏ (374-10) 65-05-53 Էլ. փոստ՝ info@hlib.am
Թեժ գիծ 8107 www.hlib.am

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | գործընկերային միջավայրի ապահովում* | | | |
| 10 | Յուրաքանչյուր եռամսյակի ընթացքում առնվազն մեկ անգամ իրազեկման նյութի պատրաստման, դրանք ԱԱՏՄ պաշտոնական կայքի և սոցիալական հարթակների միջոցով տարածելու արդյունքում հանրության և տնտեսավարողների շրջանում իրազեկվածության բարձրացում | «Թեժ գիծ» ծառայությամբ ստացված զանգերի թվաքանակի, բովանդակության պարբերաբար ամփոփում, վերլուծություն, հաշվետվությունների կազմում | ԻԽՀՏԱԲ | 2024թ | Թեժ գիծ ծառայության հեռախոսահամարով 2024թ առաջին եռամսյակում ստացվել է 1473 զանգ,2024 թվականի առաջին եռամսյակում ՀՀ առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի Թեժ գիծ ծառայության հեռախոսահամարով ստացված զանգերի վերաբերյա<br>Թեժ գիծ ծառայության հեռախոսահամարով հաշվետու ժամանակահատվածում ստացվել է 1473 զանգ:<br>Զանգերի պատկերն, ըստ ամիսների.<br>Հունվար՝ 403 զանգ<br>Ըստ ոլորտների՝<br>•Աշխատանքային օրենսդրության վերահսկողություն՝ 201, Հիգիենիկ, սանիտարահիգիենիկ և հակահամաճարակային վերահսկողություն՝ 10,<br>•Դեղերի շրջանառության վերահսկողություն՝ 3,<br>• Բժշկական օգնության և սպասարկման վերահսկողություն՝ 8,<br>• Տեղեկատվություն՝ 92, |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | | | • ԱԱՏՄ գործառույթից դուրս՝ 88,<br>• Առաջարկ՝ 1:<br>Փետրվար՝ 502 զանգ<br>Ըստ ոլորտների՝<br>Աշխատանքային օրենսդրության վերահսկողություն՝ 230,<br>Հիգիենիկ, սանիտարահիգիենիկ և հակահամաճարակային վերահսկողություն՝ 21,Դեղերի շրջանառության վերահսկողություն՝ 4,<br>Բժշկական օգնության և սպասարկման վերահսկողություն՝ 8,<br>Տեղեկատվություն՝ 152,<br>ԱԱՏՄ գործառույթից դուրս՝ 87:<br>Մարտ՝ 568 զանգ<br>Ըստ ոլորտների՝<br>Աշխատանքային օրենսդրության վերահսկողություն՝ 262,Հիգիենիկ, սանիտարահիգիենիկ և հակահամաճարակային վերահսկողություն՝ 21,Դեղերի շրջանառության վերահսկողություն՝ 11,<br>Բժշկական օգնության և սպասարկման վերահսկողություն՝ 2,<br>Տեղեկատվություն՝ 144,<br>ԱԱՏՄ գործառույթից դուրս՝ 128: |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | | | Թեժ գիծ ծառայության հեռախոսահամարով 2024 թ երկրորդ եռամսյակում ստացվել է 2055 զանգ<br><br>2024 թվականի երկրորդ եռամսյակում ՀՀ առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի Թեժ գիծ ծառայության հեռախոսահամարով ստացված զանգերի վերաբերյալ<br>Թեժ գիծ ծառայության հեռախոսահամարով հաշվետու ժամանակահատվածում ստացվել է 2055 զանգ:<br>Զանգերի պատկերն, ըստ ամիսների.<br>Ապրիլ՝ 681 զանգ<br>Ըստ ոլորտների՝<br>Աշխատանքային օրենսդրության վերահսկողություն՝ 292,<br>Հիգիենիկ, սանիտարահիգիենիկ և հակահամաճարակային վերահսկողություն՝ 27,<br>Դեղերի շրջանառության վերահսկողություն՝ 18,<br>Բժշկական օգնության և սպասարկման վերահսկողություն՝ 7,<br>Տեղեկատվություն՝ 169,<br>ԱԱՏՄ գործառույթից դուրս՝ 168:<br>Մայիս՝ 723 զանգ |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | | | Ըստ ոլորտների՝<br>Աշխատանքային օրենսդրության վերահսկողություն՝ 331,Հիգիենիկ, սանիտարահիգիենիկ և հակահամաճարակային վերահսկողություն՝ 34,Դեղերի շրջանառության վերահսկողություն՝ 16,<br>Բժշկական օգնության և սպասարկման վերահսկողություն՝ 8,<br>Տեղեկատվություն՝ 186,<br>ԱԱՏՄ գործառույթից դուրս՝ 148:<br>Հունիս՝ 651 զանգ<br>Ըստ ոլորտների՝<br>Աշխատանքային օրենսդրության վերահսկողություն՝ 326,Հիգիենիկ, սանիտարահիգիենիկ և հակահամաճարակային վերահսկողություն՝ 40,Դեղերի շրջանառության վերահսկողություն՝ 6 ,<br>Բժշկական օգնության և սպասարկման վերահսկողություն՝ 9,<br>Տեղեկատվություն՝ 117,<br>ԱԱՏՄ գործառույթից դուրս՝ 153:<br>Թեժ գիծ ծառայության հեռախոսահամարով 2024 թ երրորդ եռամսյակում ստացվել է 2171 զանգ<br>2024 թվականի երրորդ եռամսյակի ընթացքում ՀՀ առողջապահական և |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | | | աշխատանքի տեսչական մարմնի Թեժ գիծ ծառայության հեռախոսահամարով կատարված աշխատանքների վերաբերյալ<br>Թեժ գիծ ծառայության հեռախոսահամարով հաշվետու ժամանակահատվածում ստացվել է 2171 զանգ:<br>Զանգերի պատկերն, ըստ ամիսների.<br>Հուլիս՝ 722 զանգ<br>Ըստ ոլորտների՝<br>•Աշխատանքային օրենսդրության վերահսկողություն՝ 324,Հիգիենիկ, սանիտարահիգիենիկ և հակահամաճարակային վերահսկողություն՝ 46,Դեղերի շրջանառության վերահսկողություն՝ 9,<br>• Բժշկական օգնության և սպասարկման վերահսկողություն՝ 7,<br>• Տեղեկատվություն՝ 202,<br>• ԱԱՏՄ գործառույթից դուրս՝ 134:<br>Օգոստոս՝ 706<br>Ըստ ոլորտների՝<br>Աշխատանքային օրենսդրության վերահսկողություն՝ 308,<br>Հիգիենիկ, սանիտարահիգիենիկ և հակահամաճարակային |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | | | վերահսկողություն՝ 42,Դեղերի շրջանառության վերահսկողություն՝ 12, Բժշկական օգնության և սպասարկման վերահսկողություն՝ 18, Տեղեկատվություն՝ 206, ԱԱՏՄ գործառույթից դուրս՝ 120: Սեպտեմբեր՝ 743 զանգ Ըստ ոլորտների՝ Աշխատանքային օրենսդրության վերահսկողություն՝ 350,Հիգիենիկ, սանիտարահիգիենիկ և հակահամաճարակային վերահսկողություն՝ 47, Դեղերի շրջանառության վերահսկողություն՝ 8, Բժշկական օգնության և սպասարկման վերահսկողություն՝ 10,Տեղեկատվություն՝ 203.ԱԱՏՄ գործառույթից դուրս՝ 125: Թեժ գիծ ծառայության հեռախոսահամարով 2024 թ չորրորդ եռամսյակում ստացվել է 2125 զանգ 2024 թվականի չորրորդ եռամսյակի ընթացքում ՀՀ առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի Թեժ գիծ ծառայության հեռախոսահամարով կատարված աշխատանքների վերաբերյալ |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | | | Թեժ գիծ ծառայության հեռախոսահամարով հաշվետու ժամանակահատվածում ստացվել է 2125 զանգ:<br>Զանգերի պատկերն, ըստ ամիսների.<br>Հոկտեմբեր՝ 806 զանգ<br>Ըստ ոլորտների՝<br>Աշխատանքային օրենսդրության վերահսկողություն՝ 342,Հիգիենիկ, սանիտարահիգիենիկ և հակահամաճարակային վերահսկողություն՝ 15,Դեղերի շրջանառության վերահսկողություն՝ 5, Բժշկական օգնության և սպասարկման վերահսկողություն՝ 13,Տեղեկատվություն՝ 332,ԱԱՏՄ գործառույթից դուրս՝ 99:<br>Նոյեմբեր՝ 706 զանգ<br>Ըստ ոլորտների՝<br>Աշխատանքային օրենսդրության վերահսկողություն՝ 355,<br>Հիգիենիկ, սանիտարահիգիենիկ և հակահամաճարակային վերահսկողություն՝ 13,Դեղերի շրջանառության վերահսկողություն՝ 5, Բժշկական օգնության և սպասարկման վերահսկողություն՝ 9,<br>Տեղեկատվություն՝ 212,<br>ԱԱՏՄ գործառույթից դուրս՝ 112: |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | | | Դեկտեմբեր՝ 613 զանգ<br>Ըստ ոլորտների՝<br>Աշխատանքային օրենսդրության վերահսկողություն՝ 220,Հիգիենիկ, սանիտարահիգիենիկ և հակահամաճարակային վերահսկողություն՝ 19,Դեղերի շրջանառության վերահսկողություն՝ 7,<br>Բժշկական օգնության և սպասարկման վերահսկողություն՝ 7,<br>Տեղեկատվություն՝ 257,<br>ԱԱՏՄ գործառույթից դուրս՝ 103: |
| 11 | Ստոմատոլոգիական ծառայություններ մատուցող կազմակերպությունների, վարսավիրանոցների, գեղեցկության և խնամքի ծառայություններ մատուցող տնտեսավարող սուբյեկտների ներկայացուցիչների համար իրազեկման սեմինարի կամակերպում | Սանիտարահիգիենիկ և հակահամաճարակային կանոններ սահմանող նորմատիվ իրավական ակտերի և դրանց պահպանման կարևորության ներկայացման, իրազեկման սեմինարների լուսաբանման միջոցով՝ հիվանդությունների տարածման կանխարգելում | ԻԽՀՏԱԲ<br>ՀՍՀՎՎ<br>ՏԿ-ներ<br>ԻԱՓՎ | 2024թ | Մեդիտրինա» ՈՒԿ-ի հետ համատեղ իրականացվել է ստոմատոլոգիական ծառայություններ մատուցող կազմակերպությունների համար իրազեկման սեմինար, որին մասնակցել են շուրջ 200 տնտեսավարող:<br>Մասնավոր նախադպրոցական ուսումնական հաստատությունների, երեխաների զարգացման կենտրոնների անձնակազմի համար կազմակերպվել է երկօրյա իրազեկման սեմինար:<br>Տարվել են աշխատանքներ վարսավիրանոցների, գեղեցկության և խնամքի ծառայություններ մատուցող տնտեսավարող սուբյեկտների համար իրազեկման սեմինար կազմակերպելու |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | | | ուղղությամբ, սակայն մասնակցության հրավերին մասնակցողներ չեն գրանցվել: |
| 12 | Սեզոնային վարակիչ հիվանդությունների վերաբերյալ իրազեկում | Իրազեկման նյութի պատրաստման, դրանք ԱԱՏՄ պաշտոնական կայքի և սոցիալական հարթակների միջոցով տարածելու արդյունքում հանրության և տնտեսավարողների շրջանում իրազեկվածության բարձրացում, հիգիենիկ գիտելիքների տրամադրում, վարակիչ հիվանդությունների կանխարգելում | ԻԽՀՏԱԲ ՀՍՀՎՎ | 3-4-րդ եռամսյակ | Ինչպես ՀՍՀՎ վարչության, այնպես էլ տարածքային կենտրոնների կողմից կազմակերպված իրազեկման սեմինարների ժամանակ տնտեսավարողները իրազեկվում են նաև վարակիչ հիվանդությունների վերաբերյալ: Իրազեկման նյութեր է հրապարակվել Տեսչական մարմնի պաշտոնական կայքէջում: |
| 13 | Բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող տնտեսավարող սուբյեկտների ներկայացուցիչների համար իրազեկման սեմինարի կազմակերպում | Փաստաթղթաշրջանառության՝ սահմանված կարգին համապատասխան վարման և բուժաշխատողների համար շարունակական մասնագիտական կրեդիտների ապահովման անհրաժեշտության վերաբերյալ իրազեկման սեմինարի անցկացման, | ԻԽՀՏԱԲ ԲՕՍՎՎ ՏԿ-ներ ԻԱՓՎ | 2024թ | Բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող տնտեսավարող սուբյեկտների համար իրականացվել են իրազեկման սեմինարներ՝ թվով 14, մինչև հոկտեմբեր ամիսը ներառյալ |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | իրազեկման սեմինարի լուսաբանման միջոցով նմանօրինակ խախտումների կանխարգելում | | | |
| 14 | Դեղերի առցանց շրջանառության վտանգների և ռիսկերի վերաբերյալ իրազեկման նյութի պատրաստում | Իրազեկման նյութի պատրաստման, դրանք ԱԱՏՄ պաշտոնական կայքի և սոցիալական հարթակների միջոցով տարածելու արդյունքում հանրության շրջանում իրազեկվածության բարձրացում, | ԻԽՀՏԱԲ ԴՇՎՎ | 3-4-րդ եռամսյակ | |
| 15 | Դեղատնային գործունեություն իրականացնող տնտեսավարող սուբյեկտների ներկայացուցիչների և բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող հաստատություններում դեղատնային գործունություն իրականացնող անձնակազմի համար իրազեկման սեմինարի կազմակերպում | Դեղատոմսով բաց թողնվող դեղերի, դեղատոմսերին ներակայացվող սահմանված ձևի և ոլորտին վերաբերվող այլ կարգավորումների ներկայացման, իրազեկման սեմինարի լուսաբանման միջոցով նմանօրինակ խախտումների կանխարգելում* | ԻԽՀՏԱԲ ԴՇՎՎ ՏԿ-ներ ԻԱՓՎ | 28.08.2024թ | դեղերի շրջանառության վերահսկողության վերաբերյալ |
| 16 | Գործատուների (նրանց ներկայացուցիչների) և աշխատողների (նրանց ներկայացուցիչների) համար ՀՀ | Աշխատանքային օրենսդրության պահանջների, | | | Իրականացվել են սեմինարներ՝ ՀՀ աշխատանքային օրենսգրքում կատարված փոփոխությունների, ոլորտը |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | աշխատանքային օրենսգրքում կատարված փոփոխությունների, ոլորտը կարգավորող իրավական ակտերի և աշխատանքային օրենսդրության իրավական վերահսկողության ընթացքում կիրառվող ստուգաթերթերի վերաբերյալ իրազեկման սեմինարի կազմակերպում | գործատուներին և աշխատողներին իրենց իրավունքների ու պարտականությունների ներկայացման, իրազեկման սեմինարի լուսաբանման միջոցով խախտումների կանխարգելում, | ԻԽՀՏԱԲ ԱՕՎՎ ՏԿ-ներ ԻԱՓՎ | 17.10.2024թ. 26.11.2024թ. | կարգավորող իրավական ակտերի և աշխատանքային օրենսդրության իրավական վերահսկողության ոլորտի իրազեկման վերաբերյալ, աշխատանքային իրավունքի բնագավառում իրականացվող վերահսկողությունը և առավել հաճախ արձանագրված խախտումները թեմաներով: |
| 17 | Շինարարություն իրականացնող կազմակերպությունների ներկայացուցիչների համար և աշխատողների առողջության պահպանման և անվտանգության ապահովման վերահսկողության ընթացքում կիրառվող ստուգաթերթերի վերաբերյալ իրազեկման սեմինարի կազմակերպում | Շինարարությունում անվտանգության կանոնների ներկայացման, դրանց խստագույնս պահպանման անհրաժեշտության ծայրահեղ կարևորության, աշխատողների նախնական և պարբերական բժշկական զննության ապահովման անհրաժեշտության ներկայացման, իրազեկման սեմինարի լուսաբանման միջոցով խախտումների և շինարարությունում դժբախտ դեպքերի կանխարգելում | ԻԽՀՏԱԲ ԱՕՎՎ ՏԿ-ներ ԻԱՓՎ | 12.07.2024թ | աշխատանքային օրենսդրության վերահսկողության ոլորտի իրազեկման հերթական սեմինարը, որին մասնակցել են նաև «Տ-ՔՆՍԾՐԱՔՇՆ» շինարարական ընկերություն 2 տասնյակից ավելի աշխատակիցներ: Ներկայացրվել է ՀՀ աշխատանքային օրենսգրքում, ինչպես նաև ոլորտին առնչվող հարակից այլ օրենքներում ու ենթաօրենսդրական ակտերում կատարված փոփոխությունները, սահմանված նորմերի ու առանձին դրույթների կիրարկման առանձնահատկությունները: |


ք. Երևան,Շենգավիթ, Արարատյան 26
☏ (374-10) 65-05-53 Էլ. փոստ՝ info@hlib.am
Թեժ գիծ 8107 www.hlib.am

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 18 | ԱԱՏՄ վերահսկողական գործառույթների ընթացքում կիրառվող իրավական ակտերի և ստուգաթերթերի վերաբերյալ տնտեսավարող սուբյեկտների շրջանում իրազեկում | Նոր հաստատված կամ ուժի մեջ մտած ստուգաթերթերի և նորմատիվ իրավական ակտերի ԱԱՏՄ պաշտոնական կայքում և ֆեյսբուքյան էջում հրապարակման միջոցով վերահսկողական գործառույթների առավել արդյունավետ և թափանցիկ իրականացում, տնտեսավարողների շրջանում իրազեկվածության բարձրացում | ԻԽՀՏԱԲ Հիմնական մասնագիտական կառուցվածքային ստորաբաժանումներ | 1-4-րդ եռամսյակ | Իրավական ակտերի ընդունումից 10 օրվա ընթացքում դրանք հրապարակվել են Տեսչական մարմնի պաշտոնական ինտերնետային կայքում և Ֆեյսբուքյան էջում: |
| 19 | ԱԱՏՄ, պետական գերատեսչությունների, ՔՀԿ-ների և գործընկեր կազմակերպությունների միջև համագործակցության շրջանակներում միջոցառումների կազմակերպում | Միջոցառումների կազմակերպում, կազմակերպված միջոցառումներին ԱԱՏՄ ներկայության ապահովում, լուսաբանում, ԱԱՏՄ ճանաչելիության բարձրացում | ԻԽՀՏԱԲ | 12.02.2024 | Միջազգային գործընկերների, մասնավորապես, ՄԱԿ-ի կանանց հարցերով հայաստանյան գրասենյակի՝ «Կանանց տնտեսական հզորացում Հարավային Կովկասում» (WEESC) ծրագրի շրջանակներում Աշխատանքային իրավունքների |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | | | իրազեկման վերաբերյալ կազմակերպվել է արշավ, որի շրջանակներում պատրաստվել են Աշխատանքային իրավունքի մասին իրազեկող հոլովակներ և պաստառներ, որոնք հրապարակվել են Տեսչական մարմնի պաշտոնական կայքում և ֆեյսբուքյան հարթակում: Հոլովակները տարածվել են նաև մայրաքաղաքի և մարզային մի շարք հեռուստաընկերություններով:<br>Երևանում կայացել է Աշխատանքի տեսչությունների Եվրասիական տարածաշրջանային դաշինքի 2024 թվականի ամփոփիչ համաժողովը, որը կազմակերպվել, լուսաբանվել է, ինչպես ԱԱՏՄ |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | | | պաշտոնական կայքում և ֆեյսբուքյան հարթակում, այնպես էլ մի շարք լրատվամիջոցներով: Նշված հարթակներով լուսաբանվել է նաև տեսչական մարմնի ղեկավար Սլավիկ Սարգսյանի՝ Աշխատանքի տեսչությունների բարձրաստիճան պաշտոնյաների երկրորդ միջազգային աշխատաժողովին մասնակցության վերաբերյալ լուրը: Կազմակերպվել և լուսաբանվել է տեսչական մարմնի ղեկավարի՝ դեղերի շրջանառության վերահսկողության ոլորտի վերաբերյալ մամուլի ասուլիսը: |


ք. Երևան,Շենգավիթ, Արարատյան 26
☏ (374-10) 65-05-53 Էլ. փոստ՝ info@hlib.am
Թեժ գիծ 8107 www.hlib.am

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | | | Կազմակերպվել և լուսաբանվել է «Գործ» իրավատեղեկատվական ամսագրի և Տեսչական մարմնի միջև հուշագրի ստորագրման արարողություն: |